

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2008թ. հուլիսի 22-ի նիստի

Մասնակցեցին.

- Տ. Սարգսյան* – ՀՀ վարչապետ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Մ. Թովուզյան* – ՀՀ նախագահի խորհրդական, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Դ.Սարգսյան* – ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
- Կ. Կիրակոսյան* – ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Գ. Գազյան* – ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Բ. Վարդանյան* – «Հայք հաստատությունե հ/կ տնօրեն, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Մ. Լալայան* – Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ս. Կարապետյան* – ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
- Գ. Հարությունյան* – «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն (հրավիրված)
- Ս.Սարուխանյան* – «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ (հրավիրված)

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2008թ առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության և ընթացիկ հարցերի մասին

-----  
(Գ. Հարությունյան, Մ. Լալայան, Մ. Թովուզյան, Դ.Սարգսյան, Գ. Գազյան Բ. Վարդանյան, Կ. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ.

1. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի (այսուհետ Հիմնադրամ) գործադիր տնօրեն Գ.Հարությունյանը ներկայացնելով Հիմնադրամի 2008թ. առաջին կիսամյակի կատարած աշխատանքները նշեց, որ հիմնադրամի գործունեությունը ներառել է մի քանի ուղղություն: Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն են եղել հայագիտական և քաղաքագիտական հետազոտությունները: Հայագիտական

հետազոտությունների շրջանակներում իրակացվել է համայնքների, այլալեզու և այլադավան հայերի, ինչպես նաև կոլեկտիվ հիշողության հարցերի վերաբերող հետազոտություններ: Գ.Հարությունյանը ներկայացրեց Հիմնադրամի կողմից կատարված աշխատանքները, հրատարակությունների քանակը և թեմատիկ ուղղվածությունները:

Խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը, ինչպես նաև խորհրդի անդամները, ընդհանուր առմամբ դրական գնահատեցին Հիմնադրամի կողմից կատարած աշխատանքները և խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը առաջարկեց ընդունել Հիմնադրամի հաշվետվությունը:

2. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գ.Հարությունյանը ներկայացրեց նաև, որ 2008թ. 1-ին կիսամյակում կատարված հետազոտությունները լավագույն կազմակերպելու համար Հիմնադրամի կառուցվածքում ստեղծվել են կենտրոններ, որոնք հետագայում կարող են գործել որպես առանձին ինքնուրույն միավորներ և ներկայացրեց այդ կենտրոնները, այն է.

- Հայագիտական կենտրոն
- Քաղաքական հետազոտությունների կենտրոն
- Ուսումնական կենտրոն
- Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն
- «Նորավանքե ԳԿՀ-ի գործունեության ապահովման ծրագիր

Խորհրդի անդամները ընդունելի համարեցին վերը նշված կենտրոնները և խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը առաջարկեց հաստատել դրանք ներկայացված տեսքով:

3. Հիմնադրամի խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը, ինչպես նաև խորհրդի անդամ Կարինե Կիրակոսյանը, ելնելով հայագիտական հետազոտությունների կարևորությունից առաջարկեցին «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գ.Հարությունյանին ներկայացնել Հայագիտության վերաբերյալ հայեցակարգային դրույթներ, ինչպես նաև Հիմնադրամի զարգացման տեսլականը: Այդ առաջարկությունը պաշտպանեցին նաև Հիմնադրամի խորհրդի անդամները և առաջարկեցին այն ձևակերպել հոգաբարձուների խորհրդի որոշման տեսքով:

4. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գ.Հարությունյանը ներկայացրեց նաև, որ հայագիտական հետազոտությունների շրջանակներում կապեր են հաստատվել մի շարք երկրների համալսարանների հետ և մասնավորապես ներկայացրեց, որ Նիդերլանդների Լեյդենի համալսարանի ներկայացուցչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել 2008թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պատմական վայրերում իրականացնել գիտարշավներ և հետազոտություններ Հայաստանի Հանրապետության և Լեոնային Ղարաբաղի ԲՈՒՀ-երի ուսանողների մասնակցությամբ: Բացի այդ, կապեր են հաստատել Իսրայելի Երուսաղեմ քաղաքի Հրեական համալսարանի հետ և այդ կապերի հետագա խորացման, ինչպես նաև հայագիտական հետազոտությունների անցկացնելու համար նպատակահարմար կլինի Հիմնադրամի աշխատակիցներին գործուղել Իսրայելի Երուսաղեմի Հրեական համալսարան և խնդրեց վերը նշված Հայաստանի Հանրապետության ու Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պատմական վայրերում գործուղման ձևով գիտարշավներ կազմակերպելու, ինչպես նաև Հիմնադրամի աշխատակիցներին Իսրայելի Երուսաղեմի Հրեական համալսարան գործուղելու համար Հիմնադրամին լրացուցիչ հատկացնել 3000,0 հազ. դրամ:

Խորհրդի անդամները և խորհրդի նախագահ ՀՀ վարչապետ Ս.Սարգսյանը հավանություն տվեցին Գ.Հարությունյանի առաջարկությանը և նպատակահարմար

համարեցին վերը նշված նպատակների համար «Նորավանքե ԳԿՀ-ին լրացուցիչ հատկացնել 3000,0 հազ. դրամ:

5. Խորհրդի անդամ Մուշեղ Լալայանը նշեց, որ Հիմնադրամի կատարված աշխատանքները առնչվում են ինչպես կրթության և գիտության բնագավառի, այնպես էլ հայկական սփյուռքի հետ և առաջարկեց «Նորավանքե ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկել նաև ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյանին և ՀՀ արտաքին գործերի նախարարության Սփյուռքի կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանին:

Առաջարկությունը պաշտպանեցին խորհրդի նախագահ Տ.Սարգսյանը և խորհրդի անդամները:

#### ՈՐՈՇԵՑԻՆ.

##### 1. Հաստատել՝

ա) «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2008թ. 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը,

բ) «Նորավանքե գիտակրթական հիմնադրամում գործող կենտրոնները.

- Հայագիտական կենտրոն
- Քաղաքական հետազոտությունների կենտրոն
- Ուսումնական կենտրոն
- Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն
- «Նորավանքե ԳԿՀ-ի գործունեության ապահովման ծրագիր

##### 2. Հանձնարարել «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի տնօրեն Գ. Հարությունյանին ներկայացնել՝

ա) հայագիտության վերաբերյալ հայեցակարգային դրույթներ ,

բ) «Նորավանքե ԳԿՀ-ի զարգացման տեսլականը:

##### 3. Նպատակահարմար համարել «Նորավանքե ԳԿՀ-ին հատկացնել 3000,0 հազ. դրամ «Նորավանքե ԳԿՀ-ի և Լեյդենի (Նիդերլանդներ) համալսարանի, ինչպես նաև «Նորավանքե ԳԿՀ-ի և Երուսաղեմի Հրեական համալսարանի միջև հաստատված գիտական կապերի շրջանակներում համատեղ գիտարշավներ, գործուղումներ և հետազոտություններ կատարելու նպատակով:

##### 4. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյանին և ՀՀ արտաքին գործերի նախարարության Սփյուռքի կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանին:

«Նորավանքե գիտակրթական  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի նախագահ,  
ՀՀ վարչապետ

***Տ. Սարգսյան***